ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՊԵՏՈՅԱՆ ՍՏՅՈՊԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
(1828–1920 ԹԹ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Խառատյան Ալբերտ Արմենակի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Թունյան Վալերի Գեորգիի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հարությունյան Միհր Ալեքսանդրի

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. ապրիլի 4-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. փետրվարի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պ.գ.թ., դոցենտ Հակոբ Մուրադյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Արդի ժամանակներում, երբ հայրենի անկախ պետականությունը գտնվում է բախտորոշ հանգրվանում, հայկական վերահսկողությունից դուրս է Արցախի մեծ մասը, այդ թվում՝ նրա մշակութային կենտրոն Շուշին, առաջնահերթ է դառնում Արցախի պատմության և կրթամշակութային կյանքի չուսումնասիրված էջերի համապարփակ հետազոտումն ու հանրահռչակումը: Սույն թեմատիկայով հետազոտությունները մեր օրերում ավելի քան կարևոր են, քանի որ ադրբեջանական պատմագիտության մեջ շարունակաբար կեղծվում է Շուշիի և առհասարակ Արցախի պատմությունը՝ միտումնավոր դրանք աշխարհին ներկայացնելով որպես «ադրբեջանական»:

Այս աշխատությամբ մեկ անգամ ևս փաստվում է, որ Արցախի իրական տերերը հայերն են, ովքեր դեռևս անհիշելի ժամանակներից ստեղծել են իրենց ազգային մշակույթը, իսկ XIX դարասկզբից Շուշիում[1] զարգացրել գրահրատարակչական գործը, ինչն էլ վկայում էր տեղի բնակչության հոգևոր ու մտավոր զարգացման մասին: Ուշագրավ է այն փաստը, որ 1827 թ. նոյեմբերին Շուշիում բացված տպարանն առաջիններից մեկն էր Այսրկովկասում, որն արդեն հաջորդ տարվանից սկսեց տպագրական աշխատանքները:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է արխիվային նորահայտ փաստաթղթերի, ձեռագիր ու տպագիր սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի և պատմագիտական գրականության հենքի վրա ուսումնասիրել հայ տպագրության պատմության մեջ Շուշիի ունեցած դերն ու նշանակությունը: Հետազոտության խնդիրները հոգևոր ու աշխարհիկ գրաքննության պայմաններում Շուշիի օրինակով հայ գրատպության ուսումնասիրումն է՝ մինչ օրս չքննարկված և արդիական հետևյալ հարցերի ընդգրկմամբ.

ա) հետազոտել Շուշիի՝ որպես տարածաշրջանային կենտրոնի գրահրատարակչական գործի սկզբնավորումն ու ընթացքը,

բ) ներկայացնել Շուշիի գրահրատարակչական կյանքի և Արցախի կրթամշակու-

---

[1] Շուշին քաղաքային կարգավիճակ է ստացել 1846 թ., իսկ մինչ այդ հիշատակվում էր որպես բերդամրոց (տե՛ս **Саркисян М.,** Из истории градостроительства Шуши, Ереван, 1996, с. 14):

թային զարգացման բարձր մակարդակը,

գ) բացահայտել Շուշիի գրահրատարակչական կյանքի վրա ազդեցություն թողած հասարակական-քաղաքական, կրոնական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային գործոնները,

դ) վերհանել մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում գրքերի և պարբերականների նկատմամբ եղած պահանջարկը Արցախում,

ե) Շուշիի տպարանների գործունեության բացահայտումով ցույց տալ ռուսական իշխանությունների քաղաքականությունը՝ հայկական գրահրատարակչությանը նպաստելու կամ խոչընդոտելու առումով,

զ) հանգամանալի լուսաբանել այն բոլոր գործոնները, որոնք նպաստում կամ խանգարում էին՝ Շուշիում կազմակերպելու գրահրատարակչական գործը,

է) արժևորել Շուշիի գրահրատարակչության ասպարեզում գործունեություն ծավալած հոգևորականների և աշխարհականների վաստակը,

ը) Շուշիում գործող տպարանների միջոցով ցույց տալ քաղաքի, ինչպես նաև Արցախի հայկական ինքնության անառարկելի իրողությունը:

Ժամանակագրական ընդգրկումը: Ատենախոսությունը ժամանակագրորեն ընդգրկում է 1828–1920 թվականները, այսինքն՝ Շուշիում գրատպության սկզբնավորումից մինչև Արցախի խորհրդայնացումը (1920 թ. մայիս):

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: Արցախի պատմության և մշակույթի մասին գրվել են բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, սակայն դրանց հեղինակների տեսադաշտից դուրս են մնացել 1828–1920 թթ. Շուշիի գրատպության պատմությանն առնչվող հիմնահարցերը, որոնք համակողմանի հետազոտման են ենթարկվում սույն ատենախոսության շրջանակներում: Առաջին անգամ ամբողջական տեսքով ներկայացվում է խնդրո առարկա ժամանակաշրջանում Շուշիի գրատպության պատմությունը, լուսաբանվում են Արցախի՝ վերելք ապրող կրթամշակութային կյանքի կարևոր և չուսումնասիրված էջերը: Տարբեր հետազոտողներ հիմնականում նկատի են ունեցել Շուշիում պարբերական հրատարակությունների սկզբնավորմանը նախորդած և հաջորդած իրադարձություններն ու դրանց բովանդակային ուղղվածությունները: Մինչդեռ սույն ատենախոսության մեջ ոչ միայն վեր ենք հանել Շուշիում հրատարակված

մամուլի վերաբերյալ մինչ օրս անհայտ տեղեկությունները, այլև լուսաբանել ենք Շուշիի գրահրատարակչական կյանքը Ռուսական կայսրության օրենքների և գրաքննության պայմաններում:

Այսրկովկասում արդյունաբերական, տնտեսական, առևտրային տարանցիկ կարևոր կենտրոններից մեկը լինելը Շուշիի համար կրթամշակութային, այդ թվում՝ գրահրատարակչության զարգացման չափազանց նպաստավոր գործոն էր:

Գիտական նորույթի առումով կարևորում ենք նաև տարատեսակ սկզբնաղբյուրնե-րի հայտնաբերումը, հատկապես՝ Ռուսաստանի ու Վրաստանի արխիվներում պահվող վավերագրերը, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Սույն հետազոտությունն ունի գործնական նշանակություն և կարող է օգտակար լինել հայկական գրահրատարակչության և Ղարաբաղի (Արցախի) թեմի պատմությունը, XIX–XX դդ. Արցախի կրթամշակութային կյանքը, ինչպես նաև Շուշիում բողոքական քա-րոզիչների գործունեությունն ուսումնասիրողների համար:

Աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը: Շուշիի գրատպության վերաբերյալ արժեքավոր փաստաթղթեր կան ինչպես Հայաստանի ազգային արխիվի՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերության (ֆ. 28), Էջմիածնի Սուրբ Լուսավորչական Սինոդի (ֆ. 56), Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվանի (ֆ. 57), Խաչիկ վարդապետ Դադյանի (ֆ. 319) ֆոնդերում, այնպես էլ Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարան)՝ Կաթողիկոսական դիվանի, Աշոտ Հովհաննիսյանի և Ալեքսանդր Երիցյանի արխիվներում: Թեմայի հետա-զոտության համար նյութեր են գտնվել նաև Ե. Չարենցի անվան գրականության և ար-վեստի թանգարանի թատերական ֆոնդերում:

Կարևոր վավերագրեր են պահվում Վրաստանի ազգային արխիվի (Թբիլիսի)՝ Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչապետի գրասենյակի (ֆ. 12), Կով-կասի փոխարքայի գրասենյակի (ֆ. 13), Թիֆլիսի նահանգապետի գրասենյակի (ֆ. 17), Կովկասի գրաքննական կոմիտեի գրասենյակի (ֆ. 480), Բազելյան քարոզիչների (ֆ. 1731), Ռուսաստանի պետական պատմական արխիվի (Սանկտ Պետերբուրգ)՝ Ներքին գործերի նախարարության Մամուլի գործերով գլխավոր վարչության գրասենյակի (ֆ. 776), Հոգևոր գործերով վարչության գրասենյակի (ֆ. 821), Ռուսաստանի Դաշնության

պետական արխիվի (Մոսկվա)՝ Ներքին գործերի նախարարության Ոստիկանության վարչության գրասենյակի (ֆ. 102) ֆոնդերում[2]:

Սույն ուսումնասիրության համար արժեքավոր են նաև արխիվային փաստաթղթերի ժողովածուները[3], ձեռագրացուցակները[4], գրացուցակները[5], մատենագիտական ցանկերը[6], հաշվետվությունները[7], աղբյուրագիտական նշանակություն ունեցող

---

[2] Ելիզավետպոլի նահանգի (1868–1917) արխիվային գործերը, որոնց մասին որոշակի պատկերացում ենք կազմում 1958 թ. հրատարակված մի ուղեցույցից (տե՛ս Центральный государственный исторический архив Азербайджанской ССР, Путеводитель, под ред. **М. И. Найдель**, Баку, 1958, с. 18–19), պահվում են Ադրբեջանի պատմության պետական արխիվում: Սակայն Ելիզավետպոլի նահանգային գրասենյակի՝ սույն ատենախոսությանն առնչվող մի շարք փաստաթղթեր գտնվել են Վրաստանի ազգային արխիվի և Ռուսաստանի պետական պատմական արխիվի ֆոնդերում:

[3] Акты, собранные Кавказскою Археографическою Коммиссіею, подъ редакцию А. Д. Берже, т. VI, ч. I, Тифлисъ, 1874, т. VII, Тифлисъ, 1878, т. VIII, Тифлисъ, 1881, Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ., Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813–1933 թթ.), կազմեց՝ **Ս. Բէհբուդեան**, Երեւան, 2001, Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԹ., Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1649–1917 թթ.), հատոր Բ., կազմեց՝ **Գ. Աւագեան**, Երեւան, 2017, Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ի., Ս. Էջմիածինը եւ հայոց գրերի գիւտի 1500 ու տպագրութեան 400 ամեակների տօնակատարութիւնը 1912–1913 թթ., կազմեց՝ **Գ. Աւագեան**, Էջմիածին, 2019, Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԻԴ. Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոս Ամենայն Հայոց (1892–1907): Մաս Գ., Կոնդակներ, կազմեց՝ **Գ. Աւագեան**, Ս. Էջմիածին, 2021:

[4] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Ը., Ձեռագիրք 2401–2700, խմբագրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, ցանկերը կազմեց՝ **Վ. Դեւրիկեան**, Երեւան, 2013, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատոր Թ., Ձեռագիրք 2701–3000, խմբագրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի,** Երևան, 2017:

[5] Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան Շուշու գրադարանի, Շուշի, 1891, Գրացուցակ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան Շուշի քաղաքում, № 2, Շուշի, 1894, Ցուցակ գրոց Շուշւոյ հասարակաց ժողովարանի, Շուշի, 1889, նույնը՝ 1895, Գրացուցակ Շուշուայ հասարակաց ժողովարանի գրադարանի, Շուշի, 1910 (այլուր հրատարակված գրացուցակները տե՛ս սույն ատենախոսության՝ օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում):

[6] **Ոսկանյան Ն., Սավալյան Ա., Սողոմոնյան Մ., Գյուլումյան Օ., Սահակյան Ա., Թադևոսյան Ս.,** Հայ գիրքը 1851–1900 թվականներին (մատենագիտություն), հատոր 3, խմբագրությամբ՝ **Գ. Աբգարյանի,** Երևան, 1999, Հայ գիրքը 1901–1920 թվականներին (մատենագիտություն), հատոր 4, կազմողներ՝ **Օ. Գյուլումյան, Ա. Ադամյան, Ս. Թադևոսյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Ա. Սահակյան**, խմբագրությամբ՝ **Դ. Սարգսյանի**, **Հ. Ղազարյանի**, Երևան, 2007, «Հայ գիրք» և «Հայ պարբերական մամուլ» համահավաք մատենագիտական ցանկերում չներառված հրատարակություններ», պր. Ա., կազմողներ՝ **Ս. Պետոյան**, **Ռ. Ալեքսանյան**, խմբագրությամբ՝ **Տ. Զարգարյանի, Հ. Ղազարյանի, Մ. Գրիգորյանի**, Երևան, 2018, Bibliographia Caucasica et Transcaucasica: Опыт справочного систематического каталога печатным сочинениям о Кавказе, Закавказье и племенах эти края населяющих, сост. **М. Мианса**ров, т. I, отделы 1 и 2, Санкт-Петербург, 1874–1876, Библиография русской периодики Грузии, ч. 1. (1828–1920), составил Г. В. Зерцалов, отв. ред. С. И. Тарханов, Тбилиси, 1941, Библиография периодических изданий России (1901–1916), т. 3 (Р–Я), составители **Л. Н. Беляева, М. К. Зиновьева, М. М. Никифоров,** под общей редакцией **В. М. Барашенкова, О. Д. Голубевой, Н. Я. Морачевского,** Ленинград, 1960, Газеты дореволюционной России (1703–1917),

աշխատությունները[8]:

1820–1830-ական թվականներին Շուշիում գործունեություն ծավալած բողոքական քարոզիչների ամենամյա հաշվետվությունները և առանձին քարոզիչների պաշտոնական զեկուցագրերը բավականաչափ տեղեկություններ են հաղորդում նրանց գրահրատարակչական գործունեության վերաբերյալ[9]: Բացի դրանից՝ թեմայի համար սկզբնաղբյուր

каталог, составители **Т. В. Акопян, А. А. Кряжева, Н. П. Седова, И. А. Снигирева, С. А. Фурман,** ред. **Т. В. Акопян, М. А. Луковская,** Санкт-Петербург, 2007:

[7] Հաշիւ Ղարաբաղի Հայոց Թեմական հոգեւոր դպրանոցի հոգաբարձութեան 1889–1890 ուսումնական տարուայ համար, կազմեց հոգաբարձութեան անդամ **Ա. Բաբախանեան**, Շուշի, 1890, Համառօտ հաշիւ մտից եւ ծախուց Թեմական դպրանոցի Հայոց Շուշուայ վասն 1890, 1891 եւ 1892 ամաց, Շուշի, 1893:

[8] **Ջալալեանց Սարգիս վրդ.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա., Տփղիս, 1842, մասն Բ., Տփղիս, 1858, **Բաֆֆի**, Խամսայի մէլիքութիւնները (1600–1827), Նիւթեր հայոց նոր պատմութեան համար (արտատպած «Մշակ» լրագրից), Թիֆլիս, 1882, **Ղուկասեանց Հ.**, Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ (պատմական նիւթեր), Թիֆլիս, 1886, **Երիցեանց Ա.**, Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգեւոր դպրոցի որ ի Թիֆլիզ (1824–1899 թ.), հատոր Ա. (1824–1850 թ.), վեց պատկերով, Թիֆլիզ, 1898, **Սեդրակեան Արիստակէս եպս.**, Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը, Ս. Պետերբուրգ, 1898, Պատմական քաղածներ, պրակ հինգերորդ, Յովհաննէս Ը. կաթողիկոս, մասն I, կազմեց **Եղիշէ ա. ք. Գեղամեանց** (արտատպած «Հովիտ» շաբաթաթերթից), Բագու, 1911, էջ 431–432, Պատմական քաղածներ, պրակ չորրորդ, Եփրեմ կաթողիկոս, մասն II, կազմեց **Եղիշէ ա. ք. Գեղամեանց** (արտատպած «Հովիտ» շաբաթաթերթից), Բագու, 1909, Պատմական քաղածներ, պրակ վեցերորդ, Յովհաննէս Ը. կաթողիկոս, մասն II, կազմեց **Եղիշէ ա. ք. Գեղամեանց** (արտատպած «Հովիտ» շաբաթաթերթից), Բագու, 1913, **Բաստամեանց Վահան ծ. վրդ.**, Տարեգրութիւն: Ս. Էջմիածին. 1872–1880 թթ., աշխատասիրութեամբ՝ **Գ. Տէր-Վարդանեանի**, Էջմիածին, 2018:

[9] 1816–1856 թթ. Բազելում հրատարակվել է ավետարանական (բողոքական) առաքելությունների մասին պարբերական (“Magazin für die neueste Geschichte der evangelischen Missions– und Bibelgesellschaften”), որի հիմնադիրը և առաջին խմբագիրը մինչև 1838 թ. եղել է Քրիստիան Գոթլիբ Բլումհարդտը: Բազելի Ավետարանական քարոզչական ընկերությունում զբաղեցնելով պատասխանատու պաշտոններ և ունենալով մեծ ազդեցություն ու հեղինակություն՝ նա 1828 թ. սկսել է հրատարակել ընկերության մյուս պարբերականը (“Der Evangelische Heidenbote”) (տե՛ս **Thomas S. R. O’Flynn**, The Western Christian Presence in the Russias and Qājār Persia c. 1760–c. 1870, Boston, 2017, p. 477): Նշենք, որ սույն ատենախոսության թեմային վերաբերում է միայն առաջին պարբերականը, որն էլ ուսումնասիրելիս կարևոր տեղեկությունների ենք հանդիպել ընկերության քարոզիչների՝ 1820–1830-ական թվականներին Շուշիում իրականացրած գործունեության մասին: Այս ստվարածավալ պարբերականները հրատարակվում էին տարին մեկ անգամ, իսկ դրանց նյութերն ամփոփվում էին բողոքական տարբեր քարոզիչների տարեկան ընդհանուր հաշվետվություն-զեկուցագրերում, ինչպես նաև առանձին քարոզիչների տարաբնույթ գրություններում: Հասկանալի է, որ Բլումհարդտը՝ որպես խմբագիր, ընտրողաբար էր հրատարակում քարոզիչների՝ անձնական բնույթի գրությունները: Ինչ վերաբերում է նրանց առաքելավայրերի մասին տարեկան ընդհանուր հաշվետվություններին, ապա դրանք պարտադիր տպագրվում էին:

են նաև այլազգի քարոզիչներ Էլի Սմիթի, Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթի[10], Գրովզ Անտոն Նորիսի[11] և Ֆրեդերիկ Դյուբուա դը Մոնպերյոյի ուղեգրությունները[12]:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են Հայաստանի ազգային գրադարանում, Հայաստանի ազգային արխիվում, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանում, Երևանի պետական համալսարանի՝ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում, Վրաստանի պատմության պետական թանգարանում, Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանում, Ռուսաստանի ազգային գրադարանում, ինչպես նաև այլ գրադարաններում և առցանց շտեմարաններում առկա՝ Շուշիում տպագրված գրքերը, «մանր տպագրություններն» ու պարբերականները: Օգտակար է եղել նաև ժամանակի պարբերական մամուլը[13], որի էջերում ներկայացված են Շուշիի գրահրատարակչական գործի ձեռքբերումներն ու դժվարությունները:

Շուշիի գրատպության պատմությունն առ այսօր խորությամբ չի ուսումնասիրվել: Այս բնագավառում առաջին հետազոտողն անվանի հայագետ Լեոն (Առաքել Բաբախանյան) է: Սակայն նա սույն հիմնախնդրին անդրադարձել է հպանցիկ, քանի որ Շուշիի գրատպության պատմությունն անմիջականորեն չի առնչվել իր աշխատությունների[14] բուն թեմաներին: Միևնույն ժամանակ նրա՝ «Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838–1913» աշխատությունը Արցախի կրթամշակութային կյանքի լուսա-

---

[10] **Eli Smith**, Researches of the Rev. E. Smith and Rev. H. G. O. Dwight in Armenia: including a journey through Asia Minor, and into Georgia and Persia, with a visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, vol. I, Boston, published by Crocker and Brewster, 1833.

[11] **Groves Anthony Norris**, Journal of a Residence at Bagdad, During the Years 1830 and 1831, London, 1832.

[12] **Frédéric Dubois de Montpereux**, Voyage autour du Caucase, chez les Tcherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée; avec un atlas géographique, pittoresque, archéologique, géologique, etc., tome IV, Paris, 1840.

[13] Խոսքը վերաբերում է «Ազգագրական հանդէս» (Թիֆլիս), «Արարատ» (Վաղարշապատ), «Արձագանք» (Թիֆլիս), «Գործ» (Թիֆլիս), «Համբաւաբեր Ռուսիոյ» (Մոսկուա), «Հայկական աշխարհ» (Շուշի, Ելիզավետպոլ), «Հանդէս ամսօրեայ» (Վիեննա), «Ղարաբաղ» (Շուշի), «Մեղու Հայաստանի» (Թիֆլիս), «Մշակ» (Թիֆլիս), «Մուրճ» (Թիֆլիս), «Փորձ» (Թիֆլիս), «Նոր-դար» (Թիֆլիս), «Տարազ» (Թիֆլիս) պարբերականներին:

[14] **Լէօ**, Հայ գրքի տօնը, Թիֆլիս, 1912, **նույնի՝** Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838–1913, Թիֆլիս, 1914, **նույնի՝** Անցյալից (հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925:

բանման առումով ունի աղբյուրագիտական կարևոր նշանակություն, քանի որ շարադրված է Ղարաբաղի կոնսիստորիայի վավերագրերի հիման վրա, և շատ դեպքերում ուղղակիորեն մեջբերված է դրանց բովանդակությունը: Նշենք, որ 1920 թ. մարտին Շուշիի հայերի կոտորածի հետևանքով Արցախի թեմը ծանր կորուստներ էր կրել, մասնավորապես՝ ամբողջությամբ կողոպտվել կամ ոչնչացվել էր թեմի կոնսիստորիայի փաստաթղթերի արխիվը[15]: Դա խոչընդոտում էր Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի տպարանի պատմության լիարժեք ուսումնասիրությունը: Սակայն Ղարաբաղի կոնսիստորիայի կողմից Էջմիածնի Սինոդին ուղարկված գրությունները, որոնք պահվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում և Հայաստանի ազգային արխիվում, բավականաչափ տեղեկություններ են հաղորդում թեմական հոգևոր դպրոցի տպարանի մասին:

Արցախի պարբերական մամուլի պատմության ուսումնասիրությամբ երկար տարիներ զբաղվել է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սմբատ Ավագյանը[16]: Նա իր ուշադրությունը հիմնականում սևեռել է Շուշիում պարբերական հրատարակությունների սկզբնավորմանը, բովանդակային ուղղվածություններին՝ ամփոփ անդրադառնալով նաև տպարանների գործունեությանը: Վերջին տարիներին Արցախի պարբերական մամուլով զբաղվել է նաև պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Միեր Հարությունյանը[17]:

Ատենախոսության թեմայի համար օգտակար են եղել նաև նախորդ տասնամյակներում հայ[18] և օտարազգի[19] հետազոտողների հրատարակած աշխատությունները, որոնք

---

[15] **Ասրյան Ներսես քհն.**, 1920 թ. Շուշիի ցեղասպանության հետևանքով Արցախի թեմի կորուստները և հետագա ողբերգական ճակատագիրը, «Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն (իրավաքաղաքական գնահատականից մինչև միջազգային դատարան)», Երևան, 2021, էջ 272:

[16] **Ավագյան Ս.**, Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից, Երևան, 1969, **նույնի՝** Էջեր Լեռնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, 1982, **նույնի՝** Ղարաբաղի մամուլի պատմություն (1828–1920), Երևան, 1989, **նույնի՝** Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ, Երևան, 1991:

[17] **Հարությունյան Մ.**, Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874–2009 թթ.), պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Ստեփանակերտ, 2010:

[18] **Լևոնյան Գ.**, Հայ գիրքը և տպագրության արվեստը. պատմական տեսություն սկզբից մինչև XX դարը, Երևան, 1946, **Իշխանյան Ռ.**, Հայ գիրքը 1512–1920, Երևան, 1981, **Վարդանյան Վ.**, Հայ գրահրատարակության պատմությունից, Երևան, 1987, **Սևյան Վ.**, Շուշի (պատմական ակնարկ), Երևան, 1991, **Տեր-Գասպարյան Ռ.**, Շուշի քաղաքը, Երևան, 1993, **Բակուր**, Շուշիի բերդաքաղաքը (պատմությունը մինչև 1920 թ.), Երևան, 2000, **Մխիթարյան Մ.**, Խորեն Ստեփանեի «Հայկական

առնչվում են Շուշիի գրահրատարակչական կյանքին: Առաջնային նշանակություն են ունեցել անցյալի մատենագետ-հետազոտողների ուսումնասիրությունները[20]:

աշխարհ» ամսագիրը, Երևան, 2002, **Հարությունյան Մ.**, Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874–2009 թթ.), պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Ստեփանակերտ, 2010, **Հարությունյան Մ.**, Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին, Ստեփանակերտ, 2010, **Գրիգորյան Հ., Հարությունյան Գ.**, Արցախի դպրոցը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2005, Հայ գրատպություն և գրքարվեստ. հանրագիտարան, Երևան, 2015, **Աբրահամյան Հ.**, Արցախը 18–19-րդ դարերում, Երևան, 2015, **Բալայան Վ.**, Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, **Սաֆարյան Ա.**, Հայ գրահրատարակչական գործը Ռուսաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին – Մոսկվա, 2017, **Մխիթարյան Մ.,** Ս. Հախումյանի «Գործ» հանդեսը (1882–1884), «Հայ պարբերական մամուլի պատմությունից» (հոդվածների ժողովածու), հատոր 1, Երևան, 1963, էջ 219–238, **Աբրահամյան Է.**, Տպարանները հայոց հայրենիքում, «Վարձք», Երևան, 2012, № 6, էջ 1–22, **Բալայան Օ.**, Հայ տպագրությունը և Շուշին, «Հայագիտական հանդես», Երևան, 2012, № 3, էջ 150–168, **Բաղդասարյան Ն.**, Մի էջ Բաղդասար Հասան-Ջալալյանի լուսավորչական գործունեության պատմությունից, «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ. Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ», Շուշի, 2014, էջ 53–59, **Դանիելյան Է.**, Շուշիի տեղը հայ տպագրական գործի պատմության մեջ, Հայկական տպագրությունը դարերի միջով (հոդվածների ժողովածու), Երևան, 2014, էջ 86–92, **Հարությունյան Վ.**, Գրահրատարակչությունը Շուշիում՝ որպես մշակութային-բարեգործական զարթոնքի ապացույց 19-րդ դարի երկրորդ կեսին–20-րդ դարի սկզբին, Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Ստեփանակերտ, 2016, էջ 120–126, **Հարությունյան Յ.**, Շուշիի ռուսերեն պարբերական հրատարակությունները, «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ. Հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանսի զեկուցումներ», Շուշի, 2014, էջ 145–160, **Ղուլյան Կ.**, Շուշիի տպագրության զարգացման պատմությունից, «Դե ֆակտո պետությունները հետխորհրդային տարածաշրջանում. զարգացման ուղղությունները և հեռանկարները» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2018, էջ 33–44, **Арутюнян Ю.**, Иноязычные периодические издания Шуши как свидетельство доминирования армянской культуры до 20-х гг. XX века.– Феномен Шуши: Историко-политологическое исследование (коллективная монография).– «Рабочие тетради» (Приложение к военно-научному журналу «Айкакан банак» Института национальных стратегических исследований имени Драстамата Канаяна Министерства Обороны Республики Армения), 2013, № 1–2, с. 92–102, **Hacik Rafi Gazer,** Studien zum kirchlichen Schulwesen der Armenier im Kaukasus. Teil 1: 19. Jahrhundert, Berlin, 2012:

[19] **Патрушева Н.**, История цензурных учреждений в XIX – начале XX века, «Книжное дело на Северном Кавказе: История и современность», сборник статей, вып. 2, Краснодар, 2004, с. 170-195, **Патрушева Н.,** Цензурное ведомство в государственной системе Российской Империи во второй половине XIX – начале XX века, диссертация на соискание учёной степени доктора исторических наук, т. 1, Санкт-Петербург, 2014, Цензоры Российской империи, конец XVIII – начало XX века, биобиблиографический справочник, Санкт-Петербург, 2013, **Чернова-Дёке Т. Н.,** Немецкие поселения на периферии Российской империи. Кавказ: взгляд сквозь столетие (1818–1917) (К 190-летию основания немецких колоний), Москва, 2008, **Thomas S. R. O'Flynn,** The Western Christian Presence in the Russias and Qājār Persia c. 1760–c. 1870, Boston, 2017.

[20] **Զարբհանալեան Գ.**, Հայկական մատենագիտութիւն (այբուբենական ցուցակ տպագրութեան գիւտէն մինչեւ առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց), Վենետիկ, 1883, **Ղազիկեան Ա.**, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, հատոր Ա. (Ա–Մ), Վենետիկ,

Ատենախոսության մեթոդաբանությունը: Հետազոտությունը կատարվել է արխիվային փաստաթղթերի, մամուլի և գրականության տվյալների համեմատության, համադրության ու վերլուծության մեթոդներով: Պատմաքննական, պատմահամեմատական և գիտական օբյեկտիվության մեթոդների կիրառմամբ համակողմանիորեն քննվել են Շուշիում գրահրատարակչական գործի իրողությունները:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթները փորձաքննություն են անցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների XL, XLI, XLII գիտական նստաշրջաններում, Ներսես Ե. Աշտարակեցու ծննդյան 250-ամյակին նվիրված (Աշտարակ, 28 փետրվարի 2020), «Կրթամշակութային կյանքն Արցախում» (Երևան, 29 մարտի 2022), ««Մշակը» պատմության զուգահեռականներում» (Երևան, 14–16 հունիսի 2022), «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ գրքի հանգրվան» (Վաղարշապատ, 6 հոկտեմբերի 2022) գիտաժողովներում: Ուսումնասիրված նյութերի հիման վրա հրապարակվել են տասը գիտական հոդված և համահեղինակությամբ հոդվածների մեկ ժողովածու: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի պատմության բաժնի կողմից:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից, որոնք իրենց հերթին բաղկացած են ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ ամփոփ ներկայացված են ատենախոսության ընդհանուր բնութագիրը, թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ժամանակագրական ընդգրկումը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աշխատանքի մեթոդաբանությունը, աղբյուրագիտական հիմքը և թեմայի ուսումնասիրության աստիճանը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է *«Բազելյան բողոքական*

1909–1912, հատոր Բ. (Յ–Ն), Վենետիկ, 1909, **Թէոդիկ**, Տիպ ու տառ, Կ. Պոլիս, 1912, **Դավթյան Հ.**, Հայ գիրքը 1801–1850 թվականներին (մատենագիտություն), Երևան, 1967:

քարոզիչների տպարանը Շուշիում և նրանց գրահրատարակչական գործունեությունը 1827–1835 թվականներին» և բաղկացած է երեք ենթագլխից: Այս գլխում ներկայացված են Շուշիում գրատպության սկզբնավորումը, առաջին հրատարակությունները, դրանց կիրառական նշանակությունը, բողոքական քարոզիչների գրահրատարակչական գործունեության առանձնահատկությունները և ռազմավարությունը: Խոսվում է հոգևոր գրաքննության պատմությանը վերաբերող նոր փաստերի մասին: Մասնավորապես պարզ է դառնում, որ Վիրահայոց թեմի առաջնորդ Ն. Աշտարակեցուն էր վերապահված Շուշիի բողոքական քարոզիչների գրքերի տպագրության թույլտվության իրավունքը: Իսկ փաստացի գրաքննությունն իրականացնում էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի և տպարանի վերատեսուչ Հարություն քհն. Ալամդարյանը:

Երկրորդ գլուխն ունի *«Բաղդասար մետրոպոլիտի տպարանը և նրա գրահրատարակչական գործունեությունը 1830–1850-ական թվականներին»* խորագիրը՝ կազմված երեք ենթագլխից: Սույն գլխում ներկայացված է Արցախի կրթական կյանքի զարգացման ասպարեզում թեմական առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտի խոշոր ներդրումը. առանձնացվում է նրա անձնական միջոցներով Շուշիում ծավալած գրահրատարակչական դժվարին գործը: Խոսվում է նաև Այսրկովկասում ռուսական պետական գրաքննության սկզբնավորման և Շուշիի հրատարակությունների վերահսկման, գրահրատարակչական գործում Մայր Աթոռի և Արցախի թեմի միջև եղած փոխհարաբերությունների մասին:

Երրորդ գլուխը՝ *«Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի տպարանը (XIX դարի կես–XX դարի սկիզբ)»*, ընդգրկում է երկու ենթագլուխ: Այս գլխում ներկայացված են թեմական հոգևոր դպրոցի տպարանի՝ ավելի քան կեսդարյա գործունեությունը, անուրանալի վաստակը տեղի կրթական կյանքում և հրատարակությունների առանձնահատկությունները: Կարևոր մանրամասներ կան ժամանակի ազգային գործիչների՝ տպարանում տարբեր տարիներին ունեցած դերակատարության մասին: Տպարանի պատմությունը կարևոր է նաև Լեոյի ու Խաչիկ վրդ. Դադյանցի գործունեության անհայտ էջերի լուսաբանման տեսանկյունից:

Չորրորդ գլուխը՝ «Շուշիի մասնավոր տպարանները» խորագրով, բաղկացած է երեք ենթագլխից: Ներկայացված են Մինաս Տառոլիճյանցի, Մահտեսի-

Հակոբյանցների, Բագրատ Տեր-Սահակյանցի, Մելքում Բաբաջանյանցի մասնավոր տպարանների տեղն ու նշանակությունը տարածաշրջանի տպագրական անդաստանում: Հիրավի, այս տպարանների գործունեությունը ոչ միայն տեղային նշանակություն ուներ, այլև տարածվում էր Այսրկովկասի հայաշատ խոշոր քաղաքներում: Մասնավորապես Մահտեսի-Հակոբյանցների տպարանը մրցակցում էր Թիֆլիսի տպարանների հետ՝ նույնիսկ պատվերներ ընդունելով Շուշիից դուրս գործող հրատարակչատներից, մասնավոր անձանցից, պետական հաստատություններից: Հատկանշական է, որ Մահտեսի-Հակոբյանցները XX դարասկզբին գրահրատարակչական ակտիվ գործունեությամբ աչքի էին ընկնում նաև Թիֆլիսում:

Եզրակացություն: Ուսումնասիրության արդյունքում ճշգրտվել է 1828–1920 թթ. Շուշիում գործած տպարանների քանակը: Դրանք են՝ բողոքական քարոզիչների, Բաղդասար մետրոպոլիտի, Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի, Մ. Տառոլիճյանցի, Մահտեսի-Հակոբյանցների, Բ. Տեր-Սահակյանցի, Մ. Բաբաջանյանցի և բոլշևիկյան ընդհատակյա տպարանները: Մինչդեռ գիտական շրջանառության մեջ դրված Հովհաննես Հովնանյանցի և Միքայել Հովսեփյանցի տպարանների գոյության մասին տվյալները ճիշտ չեն, այսինքն՝ այդպիսի տպարաններ առհասարակ չեն եղել: Խնդրո առարկա ժամանակաշրջանում Շուշիում, բացի հայկական տպարաններից, այլ տպարաններ չեն գործել: Ինչ վերաբերում է բոլշևիկյան ընդհատակյա տպարաններին, ապա հասկանալի պատճառներով դրանք կրթամշակութային գործունեություն չեն ծավալել:

Հետազոտության արդյունքում ի հայտ են եկել Շուշիում տպագրված ավելի քան երեք տասնյակ անուն գրքերի մասին տեղեկություններ: Հավաքվել են Շուշիում տպագրված 30-ից ավելի եզակի գրքեր, որոնք մինչ այդ անհայտ են եղել մատենագետներին և ուսումնասիրողներին[21]: Մինչ օրս գիտական գրականության մեջ շրջանառվում է այն միտքը, որ 1828–1920 թթ. Շուշիում տպագրվել է 150 անուն գիրք: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս թիվը խիստ մոտավոր է, քանի որ դրա հիմքում ընկած են «Հայ գրքի մատենագիտության» հատորները: Կարելի է ասել, որ 1828–1920 թթ. Շուշիում

[21] Շուշիում տպագրված նորահայտ գրքերի թվայնացված տարբերակները փոխանցել եմ Հայաստանի ազգային և ԳԱԱ հիմնարար գիտական գրադարաններին, որոնք տեղադրվել են «Հայ գիրք» առցանց շտեմարանում:

տպագրված գրքերի թիվը կարող է անցնել 300-ից: Այդ տարիներին գրքերից ու պարբերականներից զատ հրատարակվել են նաև մեծաքանակ «մանր տպագրություններ»: Ճշգրտվել են Հայաստանի ազգային գրադարանում և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մի շարք գրքերի թերի օրինակների մատենագիտական տվյալները, ըստ որոնց՝ մատենագետների նկարագրած անթվակիր կամ առանց տպարանի տվյալի գրքերի մի զգալի մասը տպագրված է եղել Շուշիում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ
ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Սուքիասյան Հ., Պետոյան Ս.,** Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828–1920 թվականներին (հոդվածների ժողովածու), Երևան, 2021, 238 էջ:
2. **Պետոյան Ս.,** Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի մասնաճյուղի գրադարան-ընթերցարանը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, № 1, էջ 68–82:
3. **Պետոյան Ս.,** Շուշիում բազելյան բողոքական քարոզիչների հաստատումը և տպարանի հիմնադրումը, «Եվրոպական համալսարան» գիտական հոդվածների ժողովածու, 2019, № 2, էջ 372–384:
4. **Պետոյան Ս., Սուքիասյան Հ.**, Այսրկովկասի հայկական տպագրությունը և Ներսես արքեպիսկոպոս Շահազիզյանը (Ներսես Ե. Աշտարակեցու ծննդյան 250-ամյակի առթիվ), «Էջմիածին», 2020, Զ. հատոր (6), էջ 116–125:
5. **Պետոյան Ս.**, Նոր փաստեր Շուշիում տպագրված առաջին գրքերի մասին, «Բանբեր Մատենադարանի», 2020, № 30, էջ 302–317:
6. **Պետոյան Ս.**, Բազելյան բողոքական քարոզիչների՝ Շուշիում հիմնադրած տպարանի պատմությունը (1827–1835 թթ.), «Հայագիտության հարցեր», 2021, № 1, էջ 45–66:
7. **Պետոյան Ս.**, Շուշիի Մահտեսի-Հակոբյանցների տպարանը (1877–1905 թթ.), «Բանբեր հայագիտության», 2021, № 2, էջ 107–129:
8. **Պետոյան Ս.**, Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի տպարանում 1837–1840 թթ. հրատարակված գրքերի շուրջ, «Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք», 2021, № 1, էջ 120–140:
9. **Պետոյան Ս.**, Բաղդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանցը և Շուշիի հայկական տպագրությունը, մասն Ա., «Էջմիածին», 2021, Է. (7) հատոր, էջ 88–102, մասն Բ., «Էջմիածին», 2021, Թ. (9) հատոր, էջ 91–107:
10. **Պետոյան Ս.**, Շուշի քաղաքի էջմիածնապատկան տպարանը և «Ձեռաց մաշտոցի» տպագրությունը (1858 թ.), «Պատմաբանասիրական հանդես», 2022, № 1, էջ 257–270:
11. **Պետոյան Ս.**, Վահան և Սմբատ Դադյանցների գրահրատարակչական գործունեությունը Շուշիում 1880-ական թթ., «Բանբեր Մատենադարանի», 2022, № 33, էջ 33–54:

ПЕТОЯН СТЁПА АЙРАПЕТОВИЧ

ИСТОРИЯ КНИГОПЕЧАТАНИЯ В ГОРОДЕ ШУШИ

(1828–1920 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

Защита диссертации состоится 4 апреля 2023 г. в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной академии наук РА (0019 Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Цель диссертации – представить историю книгопечатания в городе Шуши в 1828–1920 гг. на основе вновь обнаруженных архивных документов, рукописных и печатных источников, периодической печати, иностранных источников, различных опубликованных материалов, научных трудов и новых фактов.

Диссертация состоит из введения, четырёх глав, которые в свою очередь состоят из подглав и заключения, списка использованных источников и литературы.

Во введении кратко изложены общая характеристика диссертации, ее актуальность, цели и задачи исследования, научная новизна, практическая значимость и методология.

Первая глава диссертации озаглавлена «Типография базельских протестантских миссионеров в Шуши и их издательская деятельность в 1827–1835 гг.» и состоит из трёх подглав. Представлено начало книгопечатания в Шуши, первые издания, их практическое значение, особенности издательской деятельности протестантских миссионеров.

Вторая глава носит название «Типография Митрополита Багдасара и ее издательская деятельность в 1830–1850-е годы» и состоит из трёх подглав. В нем представлена непростая работа книгоиздательства в Шуши с обращением личных

средств митрополита Багдасара, примаса епархии Арцаха. В этой главе также рассказывается о начале российской цензуры, контролирующей армянские издания в Закавказье.

Третья глава "Типография епархиального духовного школы Карабаха (середина 19 века – начало 20 века)" включает две подглавы. Здесь представлена более чем полувековая деятельность типографии духовной школы, ее неоспоримая заслуга в просветительской жизни армян Арцаха.

Четвёртая глава носит название «Частные типографии Шуши» и состоит из трёх подглав. В ней представлены частные типографии Шуши, проведены параллели между частными типографиями Тифлиса.

В заключении подведены итоги диссертации.

PETOYAN STYOPA HAYRAPET

THE HISTORY OF TYPOGRAPHY IN SHUSHI CITY
(1828–1920)

Dissertation for the degree of candidate of sciences in History, with specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on April 4, 2023, at 14^{00} at the session of the specialized council 004 on Armenian History of SCC of RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019 Yerevan, M. Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The aim of the dissertation is to present the history of typography in Shushi city in 1828–1920 based on newly discovered archival documents, handwritten and printed sources, periodical press, foreign sources, various published materials, scientific works and new facts.

The dissertation consists of an introduction, four chapters, which in turn consist of subchapters and a conclusion, a list of used sources and bibliography.

The introduction summarizes the general characteristics of the dissertation, its modernity, the goals and objectives of the study, the scientific novelty, the practical significance and methodology.

The first chapter of the dissertation is entitled "The printing house of Basel Protestant missionaries in Shushi and their publishing activities in 1827–1835" and consists of three sub-chapters. It presents the beginning of printing in Shushi, the first editions, their practical significance, the characteristics of the publishing activity of Protestant missionaries.

The second chapter is entitled "Metropolitan Baghdasar's printing house and its publishing activities in 1830–1850" and consists of three sub-chapters. It presents the

difficult work of book publishing in Shushi with the circulation of personal measures of Metropolitan Baghdasar, diocesan Primate of Artsakh. This chapter also presents the beginnings of Russian censorship controlling the Armenian publication in the Transcaucasus.

The third chapter – "The printing house of the diocesan spiritual school of Karabakh (mid-19th century – beginning of the 20th century)", includes two sub-chapters. Here, the more than half-century activity of the printing house of the spiritual school, its undeniable merit in the educational life of the Armenians of Artsakh, is presented.

The fourth chapter is entitled "Private Printing Houses of Shushi" and consists of three sub-chapters. It presents the private printing houses of Shushi, drawing parallels between the private printing houses of Tiflis.

The results of the dissertation have been summarized in the conclusion.